

1107-1109



ՎԵՐՋԻՆ ԴԱՍ

Այն ինչ որ այստեղ պատմելու եմ ձեզ,
եղել է 1870 թվականին:

Այն ժամանակ պատերազմ էր Ֆրանսիացի-
ների և գերմանացիների միջ: Յաղթող գեր-
մանացիները անասելի կատաղութամբ և
վարվում յաղթված Ֆրանսիացիների վե-
րաժույցում ու տանջումէին նրանց ամեն տեղ և
այլ: Ամբողջ Ֆրանսիան յուսահատութեան
մէջ էր ընկած. իսկ թշնամին բանի գնում էր,
այնքան մօտենումէր Ֆրանսիայի թրախն նրա
Փարիզ մայրաքաղաքին: Ահա հենց այդ օրերն
էին կատարվում այն բաները՝ որոնց մասին ես
ուզում եմ պատմել ձեզ:—Լսեցէ՛ք:

Մի առաւօտ՝ ես շատ ուշացայ ուսումնա-
րան գնալուց և խիստ վախենումէի պ. Համլէի,
մեր վարժապետի, նկատողութիւններից, ևս ա-
ռաւել նրա համար՝ որ նա պիտի հարցնէր այդ

28. 1009

9. 1108-60

1/31

օրը քերականութեան դասը: Իսկ ես այդ դասի առաջին խօսքն անգամ չէի իմանում: Յանկարծ մի միտք եկաւ գլուխս՝ թողնել դասը եւ փախչել գնալ դաշտ—պայծառ, տաք օր էր:

Անտառից լսվումէր մշահաւնների շվշվոցը, իսկ Րիսլէր գետի մօտ մարգագետնում վարժվումէին պրուսացի զինուորները. այս բոլորը ինձ համար աւելի հրապուրիչ էր, քան թէ դասը, բայց ես ինձ զսպեցի եւ արագ-արագ վազեցի դէպի ուսումնարան: Վիւանատան մօտով անցնելիս՝ տեսայ յայտարարութիւնների փողոցի վրա ժողովուրդ է հաւաքվել: Ահա արդէն երկու տարի է, որ միշտ վատ լուրեր էինք լսում. մի օր անաջող կռիւների, միւս օր պատերազմական տուրքերի եւ զանազան նոր պրուսական հրամանների մասին:

Ելի մի բան է պատահել, մտածեցի ես, եւ, չր կանգնելով, սկսեցի վազել հրապարակովը. այստեղ ես պատահեցի դարբին Վախդերին: Իր աշակերտին հետ նա արդէն կարգումէր յայտարարութիւնը. ինձ տեսնելով, ասաց.

—Մի շտապի, դու դեռ ես շատ-վաղ կարող ես հասնել ուսումնարանդ:

Ես կարծեցի, թէ նա ինձ վրա ծիծաղում է եւ շնչասպառ ներս վաղեցի պ. Համէլի տան բակը, որտեղ գտնվում էր մեր ուսումնարանը:

Առհասարակ միշտ դասերի սկզբում սաստիկ աղմուկ էր լինում, որը մինչև անգամ փողոցումն էլ էր լսվում. սեղանները փակվում եւ բացվումէին. ամենքը, փակած ականջները, միասին սերտումէին իրանց դասերը բարձր ձայնով, որ ինչ է աւելի հեշտ կարողանան միտները պահել: Իսկ վարժապետը, իր հաստ քանօնը սեղանին զարնելով, ասումէր. «Արդեօք չէ՞ կարելի, որ մի քիչ կամաց սերտէք դասերնիդ»: Յոյսս ես հէնց այդ աղմուկի վրա էի դրել, որ աննկատել կերպով գնայի տեղս նրստէի: Բայց, սովորութեան հակառակ, այդ օրը ամեն ինչ լուռ ու հանգիստ էր. հէնց իմանաւ թէ կիրակի էր: Բաց լուսամտից ես տեսայ ընկերներիս, որ ամենքը իրանց տեղերը նստած էին. իսկ պ. Համէլը, իր զարհուրելի քանօնը կռնատակին, անց ու դարձ էր անում: Ստիպ-

ված էի այդ խորին լուսթեան ժամանակ դու-
ռը բաց անել և մանել ներս դասատուն: Աս-
րող էք երևակայել, թէ ի՞նչ էր իմ դրութիւ-
նը ահուգողից: Բայց ի՞նչ էք կարծում,— ոչ-
ինչ չեղաւ: Պ. Համէլը նայեց ինձ վրա առանց
բարկանալու և բոլորովին հանդարտ կերպով
ասաց.

— Շուտ արա, տեղդ նստի՛ր, փոքրիկ Ֆը-
րանց. մենք ուզում էինք արդէն առանց քեզ
դասը սկսել:

Եւ անցկացայ նստարանի վրայով և նստե-
ցի տեղս:

Երբ փոքր ինչ ուշքի եկայ, իսկոյն նկատե-
ցի, որ մեր վարժապետը հագած ունէր նոր
լաւ կանաչագոյն սերտուկի, ճիւղմակ և գեղեցիկ
հարթած օձիք և սև ասեղնագործ մետաքսեայ
գլխարկի, որը նա հագնումէր միայն նշանաւոր
օրերում կամ քննութեան ժամանակ, կամ ա-
շակերտներին ընծաներ բաժանելու օրը: Իսկ ամ-
բողջ դասարանը կարծես մի ինչ-որ նոր անսովոր
ու հանդիսաւոր բանի էր սպասում: Բայց ինձ
ամենից աւելի նա էր զարմացնում, որ այդ օ-

րը վերջին նստարանների վրա նստած էին գիւ-
ղացիները, որոնք, նստարանները, առհասարակ
միշտ դատարկ էին մնում. գիւղացիներն էլ էին
մեզ նման լուս: Այստեղ էին ծեր Հաուզէր
իր մշտական եռանկիւնի գլխարկով, նախկին
տանուտէրը, գրագիրը և շատ ուրիշ մարդիկ:
Ամենքն էլ տրտում էին: Հաուզէրը բերել էր
իր հին ու ծայրերը մաշված այբենարանը և
դրած ունէր իր ծնկների վրա. իսկ նրա նոր
ու մեծ ակնոցը կիսաբաց ընկած էր գրքոյի
կողքին: Մինչդեռ ես զարմացած նայում էի այս
ամենի վրա, պ. Համէլը բարձրացաւ ամբիօն
և ասեց միեւնոյն մեղմ ու քաղցր ձայնով, որով
մի քիչ առաջ ընդունեց ինձ:

— «Երեխաներ, այսօր իմ Պէրլին Գասն է:
Իերլինից հրաման է եկել, որ Ել'զասի ու Լօ-
րէնի ուսուցիչներուն սրանից յետոյ գեր-
մաներէն միայն դաս տրվի.....: Լզուց ձեզ
համար նոր ուսուցիչ է գալու: Իսկ մեր այս-
օրվան դասը Ֆրանսերէնի վերջին դասն է:
Խնդրումեմ ձեզ, երեխաներ, ուշադրութեամբ
լսեցէք »:

Այս խօսքերը սաստիկ շարժեցին սիրտս: Անիրաւնե՛ր, անիրաւնե՛ր: Հը՛մ, հիմա եմ հասկանում, թէ ի՛նչ հրաման էր դիւանատան մօտ ի տես դրւիւմ: Ահրջե՛ն դասը Փրանսերէնի... իսկ ես հազիւ հազ էի կարողանում գրել ուրեմն ես էլ չեմ կարողանալ սովորել: Ո՛հ, ի՛նչպէս հիմա ամսոսումեմ, որ այնքան ժամանակ կորցրի, երբ կարգալու տեղ կամ թոշունների բռնների ետեւից էի ընկած քանդում, կամ սառոյցի վրա էի սահում: Իմ գրքերը՝ քերականութիւնը և սրբազան պատմութիւնը, որոնք հէնց այս առաւօտ ատելի էին ինձ, այժմ աչքիս այնպէս սիրելի էին դարձել, որ կարծես իմ հին բարեկամները լինէին, որոնցից բաժանվելը շատ դժուար է: Իսկ պ. Համէլը, երբ միտս էր դալիս, թէ շուտով գնալու է և ես նրան այլ ևս չեմ տեսնելու, ես մոռանումէի նրանից ստացած պատիժներս և քանօնի հարուածները: Այժմ ես հասկացայ, թէ նա ինչո՛ւ էր հազել իր նոր շորերը, ինչո՛ւ ծեր զիւղացիները եկել էին նրա դասը լսելու և յայտնումէին նրան իրանց ամոստանքը, որ շատ շուտ չեն ե-

կել ուսումնարան. արտայայտումէին իրանց շնորհակալութիւնը նրա քառասունամեայ ծառայութեան համար և յարգանք էին մատուցանում իրանցից հեռացող հայրենիքին, այն հայրենիքին՝ որի անունով թոշումէին նրանք: Ես խորասուզված էի խիստ մտածողութեանց մէջ: Յանկարծ ես լսեցի անունս. իմ հերթն էր դասը պատասխանելու: Ի՛նչպէս էի ուզում այդ ժամանակ սկզբից մինչև վերջը առանց սխալվելու պատմել քերականութեան դասը, բացատրել նրա բոլոր կանօնները: Բայց հէնց առաջի խօսքից ես շփօթվեցի և վշտալի սրտով մնացի կանգնած նստարանիս մօտ, չը համարձակվելով գլուխս բարձրացնել: Պ. Համէլը ասեց ինձ.

—Այս անգամ ես քեզ վրա չեմ բարկանայ. դու առանց այդ էլ պատժված ես նրանով, որ դասդ չըգիտես: Երեւի, ասումես, է՛, փաստ չըկայ, վաղը կըսովորեմ: Բայց հիմա տեսնումես ի՛նչ պատահեց: Այո, սիրելիս, այդ ուսումին էսօր եղուց անելը միայն թշուառութիւն բերաւ

մեր Ալ'զասի*) զլխին: Այժմ գերմանացիները իրաւունք ունեն մեզ ասելու. «էհ, դուք էլ ինչպիսի Ֆրանսիացի էք, երբ ձեր մայրենի լեզուով ոչ գրել և ոչ կարդալ էք իմանում»։ Բայց այս բանում մենակ դու չես մեղաւոր, իմ խեղճ Պրանց, ոչ. ամեն մէկը մեզանից պէտք է վեր առնի իր մեղքը, յանդիմանէ ինքն իրան. ձեր ծնողները շատ էլ հոգս չեն քաշել ձեր ուսման համար: Նրանք լաւ էին համարում, զրկել ձեզ կամ դաշտ՝ հերկիլու կամ գործարան՝ բանելու. միայն թէ մի քանի կօպէկ աւելի կարողանային ստանալ: Իսկ միթէ ես կարող եմ ինքս ինձ չը յանդիմանել, չը կարմրել ամօթից. միթէ դասի տեղ երբեմն ես ձեզ չեմ ստիպել ջրել իմ այգին. իսկ երբ ես գնումէի գեղարքունի որսալու, միթէ դժուարանումէի ձեզ արձակել:

Յետոյ նա բաց արեց քերականութիւնը և բացատրեց մեր դասը: Ես զարմանումէի, թէ

*) Ալ'զաս — Ֆրանսիայի այն նահանգն է, որտեղ պատահումէին այստեղ պատմված անցքերը:

Ինչպիսի հեշտութեամբ էի հասկանում ամեն ինչ բոլորը՝ ինչ որ նա պատմումէր, ինձ շատ հեշտ էր երևում: Սարծեմ, երբէք այդպիսի ուշադրութեամբ ես նրան չէի լսել. ինքն էլ դեռ երբէք այդպիսի համբերութեամբ, պարզ և հասկանալի կերպով չէր բացատրել, ինչպէս այսօր: Սարծեմ-թէ, բաժանվելով մեզանից, նա կամենումէր տալ մեզ իր բոլոր գիտութիւնը և միանգամից մեր գլուխը ածել իր բոլոր իմացածը:

Պատից յետոյ մենք սկսեցինք վայելչագրութիւնը: Այս անգամ պ. Համէլը ամեն մէկի համար նոր օրինակներ էր պատրաստել: Նրանք բազկացած էին հետեւեալ խօսքերից.

— Պրանսիա, Ալ'զաս. Պրանսիա, Ալ'զաս:

Այդ օրինակները մենք կպցրինք քարտէզներին, որոնք զրօշակների նման ծածանումէին: Պէտք էր տեսնէիք, թէ մենք ինչպիսի ուշադրութեամբ էինք զրուս, թէ ինչպիսի լռութիւն էր տիրում դասարանում: Միայն թրդ-թի վրա ճռճռող զրիչների ձայնն էր լսվում: Նրբեմն մայիսվան բզէզները ներս էին թռու-

չում սենեակը, բայց նրանց վրա ոչ ոք ու-
շադրութիւն չէր դարձնում. մինչև անգամ ա-
մենափոքր աշակերտները այնպիսի ջանքով և
բարեկազմութեամբ էին դժուար, որ կարծես
թէ այդ գծերն էլ Ֆրանսերէն լինէին. կառու-
րի վրա մնչումէին աղանիւթերը. ես մտա-
ծեցի՝ չը լինի թէ սրանց էլ ստիպեն դեր-
մաներէն մնչել: Ժամանակ-ժամանակ ես բարձ-
րացնումէի աչքերս և տեսնումէի ի՛նչպէս պ.
Համլըր Հանգիստ կանգնած էր ամբիօնի մօտ
և ուշադրութեամբ դիտումէր չորս կողմի ա-
ռարկաները. հէնց կարծես-թէ կամենումէր յա-
ւիտեանս դրօշմել իր մտքում այդ տունը և
այդ տան մէջ եղած բոլոր բաները: Ախր, իսկ
որ հեշտ բան չէ, է՛, քառասուն տարի է, որ
նա ապրել է այստեղ. քառասուն տարի է, որ
տեսնումէ միւսնոյն բակը տան առջև. քառա-
սուն տարի է, որ նա կառավարումէ միւսնոյն
դասատունը: Բոլորը մնացել է առաջվայ պէս,
միայն նստարանները և քարտէզները էին ժա-
մանակից խիստ մաշվել. համ էլ բակի ընկուզե-
նին աւելի մեծացել ու փարթամացել էր. նոյն-

պէս դայրուկը՝ որը ինքն էր իր ձեռքով տըն-
կել, բոլոր լուսամուտները արդէն շրջապատել
էր և բարձրացել էր մինչև կտուրը: Երևի նրա
սիրտը խիստ ցաւումէր, երբ նա տեսնումէր,
որ այդ ամենը պէտք է շուտով թողնի ու գը-
նայ. երբ նա լսումէր, ի՛նչպէս նրա քոյրը վի-
րի սենեակում յետ ու առաջ էր վազվզում ու
հաւաքում տան իրեղէնները: Այո՛, մէկ օրից
յետոյ պէտք է թողնեն տուն ու տեղ և ընդ
միշտ հեռանան հայրենի հողից:

Այնուամենայնիւ նա կարողացաւ դասը մինչև
վերջը շարունակել: Վայելչագրութիւնից յե-
տոյ պատմութեան դասն էր: Փոքրիկ աշա-
կերանները ամենքը միասին կարդացին սովորա-
կան իրենց Բա, Բե, Բէ:

Իսկ այնտեղ, անկիւնում, ծերունի Հառու-
ղէրը ակնոցը քթին դնելով, վերցրեց այբբենա-
րանը և կրկնումէր միմեանց ետեւից վանկերը:
Երևումէր, որ նա էլ էր աշխատում. նրա ձայ-
նը յուզմունքից դողդողումէր. այդ մի այնպի-
սի անսովոր բան էր, որ մենք ուզումէինք համ
ծիծաղել, համ էլ լաց լինել:

Ո՛հ, երբէ՛ք այդ վերջի դասը ես չեմ մոռանայ:

Աէս օր էր: Յանկարծ մեր լուսամտից լըս-վեցաւ երաժշտութեան ձայնը: Պ՛րանք պրուս-ացիներն էին, որոնք վերադառնումէին զինուորական վարժութիւնից: Պ. Համէլը գունաթափ-ված վայր իջաւ ամբիօնից, երբէ՛ք նա ինձ այդպէս զգացված չէր երևացել:

« Եղբարնե՛ր եղբարնե՛ր այդ »:

Բայց նրա ձայնը խեղդվեց և նա չը կա-րողացաւ իր խօսքը շարունակել: Նոյն ժա-մանակ նա երեսը շուռ տվեց դէպի գրա-տախտակը, վեր առաւ կաւիճը և բոլոր ուժով տախտակին քսելով, խոշոր տառերով գրեց.

« Աեցէ՛ք Պրանսիան »:

Եյստեղ նա կանգ առաւ և գլուխը պա-տին թեցեց: Նա այլ ևս չը խօսեց, միայն ձեռ-քով մեզ նշան արեց.

« Պ՛նացէ՛ք դասը վերջացաւ »:



ՀՀ Ազգային գրադարան



NL0249848

ՀՀ Ազգային գրադարան



NL0249847

ՀՀ Ազգային գրադարան



NL0249846

